



# ԺՈՒՆԱԼԻՍՏՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆ, ԳՅՈՒՄՐԻ, ՊՈՒԵԿԻՆԻ Փ. 96, ՀԵՌԱԽՈՍ՝ 0312 30622

## JOURNALISTS' CLUB "ASPAREZ"

POUSHKIN STREET 96, GYUMRI, ARMENIA, (0312 30622)

EMAIL: [INFO@ASPAREZ.AM](mailto:INFO@ASPAREZ.AM) [WWW.ASPAREZ.AM](http://WWW.ASPAREZ.AM)

ՀՀ Հեռուստատեսային և ռադիոյի ազգային հանձնաժողովի  
Նախագահ Գ.Ամալյանին

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ ՀԿ խորհրդի նախագահ Լ.Բարսեղյանին,  
Հասցե. Հայաստան, 3102, Գյումրի, Պուշկինի փ., 96

### ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՅՈՒՄ

Պարոն Ամալյան,

Ինձ հասած տեղեկություններով, ՀՀ տարածքում գործող հեռուստաընկերությունները և ռադիոկայանները պարբերաբար՝ ամսական երկու անգամյա պարբերականությամբ, ՀՌԱՀ-ին են տրամադրում որոշակի տեղեկություններ իրենց ծրագրերում տեղ գտած հաղորդումների ծավալների մասին, մասնավորաբար՝ տեղեկություններ այն մասին, թե օրական քանի թույլ լրատվական ծրագրեր են հաղորդել, քանի թույլ գովազդ, և այլն:

Ես, ուսումնասիրելով ՀՀ «Հեռուստատեսության և Ռադիոյի մասին», «ՀՌԱՀ Կանոնակարգ», «Գովազդի մասին» օրենքները, ՀՌԱՀ աշխատակազմի կանոնադրությունը, չգտա այն իրավական կոնկրետ հիմքը, որի հիման վրա ՀՀ ՀՌԱՀ-ն իրավազոր է այդ տեղեկությունները առանց հատուկ ստուգման ընթացակարգերի ստանալ հեռուստաընկերություններից և ռադիոկայաններից, ու չգտա այն իրավական այն կոնկրետ հիմքը, որի հիման վրա հեռուստաընկերությունները և ռադիոկայանները պարտավոր են իրենց ծրագրերի թեմատիկ ծավալների մասին մշտապես տեղեկություններ տրամադրել ՀՌԱՀ-ին: Չբացառելով, որ ես, որպես ոլորտի զարգացմամբ մտահոգ կազմակերպության ղեկավար ու քաղաքացի, չեմ տիրապետում ինչ-ինչ տարրական տեղեկությունների, այս հարցմամբ խնդրում եմ ինձ տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ո՞ր հեռուստաընկերություններն ու ռադիոկայաններն են պարբերաբար տեղեկություններ տրամադրում ՀՌԱՀ-ին իրենց հաղորդումների թեմատիկ ծավալների մասին: Ի՞նչ պարբերականությամբ են նրանք ՀՌԱՀ-ին տրամադրում այդ տեղեկությունները:
2. Երբվանի՞ց է սկսել գործել հեռուստաընկերություններից ու ռադիոկայաններից իրենց հաղորդումների թեմատիկ ծավալների մասին ՀՌԱՀ-ին պարբերաբար տեղեկություններ տրամադրելու կարգը, եթե այդպիսի կարգ, այնուամենայնիվ, կա:
3. Ի՞նչ օրենք(ներ)ի, կամ ենթօրենսդրական ակտ(եր)ի, կամ պաշտոնական հրաման(ներ)ի հիման վրա են հեռուստաընկերություններն ու ռադիոկայանները կատարում ՀՌԱՀ-ին իրենց ծրագրերի թեմատիկ ծավալների մասին պարբերաբար ու մշտապես տեղեկություններ տրամադրելու պարտականությունը, թե՞ նրանք այդ անում են կամավոր: Եթե այս հարցի վերաբերյալ առկա են համապատասխան ակտեր (օրենք, ենթօրենսդրական ակտ, հրաման, արձանագրություն կամ այլ փաստաթուղթ), խնդրում

Եմ նշել իրավական ակտերի անվանումները, ընդունման ժամանակը, հոդվածը, մասը, եւ այն պաշտոնական աղբյուրը, որտեղ հրապարակվել են դրանք:

Ես իմ վերոհիշյալ հարցերի պատասխանները որոնել եմ նաեւ [ՅՈՒՅՅ](http://www.tvradio.am) պաշտոնական վեբ կայքում՝ <http://www.tvradio.am> բայց չեմ գտել այնտեղ, 2007 թվի նոյեմբերի 15-ին ժամը 11-ին զանգել եմ Ձեր գրասենյակ, զրուցել Մեթոդական բաժնի վարիչ Լիլիթ Գազազյանի հետ, տվել եմ վերոհիշյալներից 3-րդ հարցը, նա, չպատասխանելով իմ հարցին, առաջարկել է գրավոր՝ նամակով, դիմել Հանձնաժողովին, ինչն էլ անում եմ:

Պատրաստ եմ վճարել ինձ տրամադրել հարցված տեղեկատվության պատճենահանման ծախսերը: Պատճենման հնարավոր ծախսերի վճարման համար, խնդրում եմ նամակով ինձ տրամադրել Հանձնաժողովի դրամային հաշվի համարը:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում, խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին եւ հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որը տիրապետում է այս նամակով հարցվող տեղեկությանը:

Եթե վերելում հարցված տեղեկությունները կամ դրանց մի մասը երբեւէ հրապարակվել է զանգվածային որեւէ լրատվամիջոցով, ապա, խնդրում եմ գրավոր տեղեկացնել այդ հրապարակման կամ հրապարակումների տեղի եւ թողարկման կամ թողարկումների համարների մասին:

Տեղեկատվություն հարցնող՝  
15 նոյեմբերի, 2007

Լեւոն Բարսեղյան